

(սրուների այն մասն՝ որ ծնկէն ցկրունկ կ'իջնայ) րնչպէս նաեւ շղթաներուն մէկ մասը 1866ին Պիոս Թ. Քահանայապետ շնորհեց Կ. Պոլսոյ կաթողիկէ Հայոց Ս. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյն, ուր կը պահուի ցայսօր:

Նաեւ ԲՈՆՆՈՒԿԻ, Պատմ... Ս. Գր. Լուսաւորչի, Վենետ. 1737, էջ 202, կը հրատարակէ Յակոբ Վելլոգի 1712 Նոյ. 17ին գրած մէկ նամակը, ասոր մէջ կը պատմէ Վելլոգ, որ երբ 1692ին Կարին էր եւ շատ Հայեր կաթողիկէ հաւատքին յարեցան, Հռոմի Յիսուսեանց Առաջնորդէն խնդրեց, որ ղրկէ Ս. Նշխար մը այն մասունքներէն որ Նապոլի կը պահուին: Հազիւ 1694 Գեկտ. 8ին Ս. Նշխարը վկայականով Կարին հասաւ: Ինք յաջորդ տարին երբ միսինի գործով Պոլիս գնաց, հետը տարաւ Ս. Նշխարը: 1695 Օգոստ. 15ին վերափոխման օրն, Ղալաթիոյ Ս. Բենեդիկտոս Յիսուսեանց եկեղեցին հայ կաթողիկէ վարդապետ մը պատարագեց եւ ուրիշ մ'ալ քարոզեց երբ Ս. Նշխարն խորանին վրայ ի յարգութիւն դրուած էր, Հայերու բազմութիւնն, արք եւ կանայք, քարոզէն ետեւ՝ ծնկերու վրայ քսուելով յառաջացան եւ Ս. Նշխարը համբուրեցին: Ինք չորս տարի ետքը Պոլսէն Սպահան գնաց, եւ Զուղա գիւղաքաղաքի Յիսուսեանց Ս. Յովսեփայ միսինարութեան եկեղեցին նուիրեց Ս. Նշխարը: